

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի 2009/101/ԵՀ հրահանգ՝ երաշխիքների համաձայնեցման մասին, որոնք անդամ պետությունները մասնակիցների և երրորդ անձանց շահերի պաշտպանության նպատակով պահանջում են ընկերություններից Պայմանագրի 48-րդ հոդվածի երկրորդ պարբերության իմաստով՝ նման երաշխիքները համարժեք դարձնելու նպատակով Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ

Պաշտոնական տեղեկագիր L 258, 01.10. 2009թ., էջեր 0011 - 0019

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի 2009/101/ԵՀ հրահանգ՝ երաշխիքների համաձայնեցման մասին, որոնք անդամ պետությունները մասնակիցների և երրորդ անձանց շահերի պաշտպանության նպատակով պահանջում են ընկերություններից Պայմանագրի 48-րդ հոդվածի երկրորդ պարբերության իմաստով՝ նման երաշխիքները համարժեք դարձնելու նպատակով

(կողիֆիկացված տարբերակ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 44(2)(ե) հոդվածը,

հաշվի առնելով հիմնադրման ազատության սահմանափակումների վերացման մասին ընդհանուր ծրագիրը [1] և, մասնավորապես, դրա VI գլուխը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը [2],

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան [3],

Քանի որ

1) «Երաշխիքների համաձայնեցման մասին, որոնք անդամ պետությունները մասնակիցների և երրորդ անձանց շահերի պաշտպանության նպատակով պահանջում են ընկերություններից Պայմանագրի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերության իմաստով՝ նման երաշխիքները Համայնքի տարածքում համարժեք դարձնելու նպատակով» Խորհրդի 1968 թվականի մարտի 9-ի 68/151/ԵՏՀ հրահանգը մի քանի անգամ ենթարկվել է էական փոփոխությունների [5]: Հստակության և ռացիոնալության նկատառումներից ելնելով՝ նշված Հրահանգը պետք է կողիֆիկացվի,

2) տեղեկությունների բացահայտման, բաժնետիրական ընկերությունների և սահմանափակ պատասխանատվությամբ այլ ընկերությունների ստանձնած պարտավորությունների վավերության, այդ ընկերությունների գրանցման անվավերության մասին ազգային դրույթների համաձայնեցումը հատուկ կարևորություն է ներկայացնում, մասնավորապես, երրորդ անձանց շահերի պաշտպանության առումով,

3) ընկերության հիմնական փաստաթղթերը պետք է բացահայտվեն, որպեսզի երրորդ անձինք կարողանան պարզել դրանց բովանդակությունը և ընկերությանը վերաբերող

մյուս տեղեկությունները, հատկապես այն անձանց մասին տվյալները, ովքեր լիազորված են պարտավորություններ ստանձնել ընկերության համար,

4) չհակասելով անդամ պետությունների ազգային իրավունքով սահմանված նյութական և ձևական պահանջներին՝ ընկերությունները պետք է հնարավորություն ունենան ընտրելու՝ իրենց կողմից պարտադիր ներկայացվող փաստաթղթերը և տվյալները ներկայացնել թղթային կամ էլեկտրոնային եղանակով,

5) շահագրգիռ անձինք պետք է հնարավորություն ունենան ռեզիստրից ստանալու այդ փաստաթղթերի և տվյալների պատճենը թղթային, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով,

6) անդամ պետություններին պետք է հնարավորություն տրվի պարտադիր ներկայացվող փաստաթղթերի և տվյալների հրապարակման համար նախատեսված պաշտոնական տեղեկագիրը պահել թղթային կամ էլեկտրոնային տարբերակով կամ հավասարապես արդյունավետ միջոցներով բացահայտում նախատեսել,

7) ընկերության տեղեկատվության միջսահմանային մատչելիությունը պետք է հեշտացվի՝ թույլ տալով, ի լրումն ընկերության անդամ պետությունում թույլատրվող լեզուներից որևէ մեկով պարտադիր բացահայտման, պահանջվող փաստաթղթերի և տվյալների կամավոր գրանցումը լրացուցիչ լեզուներով: Բարեխղճորեն գործող երրորդ անձինք պետք է հնարավորություն ունենան վկայակոչելու դրանց թարգմանությունները,

8) նպատակահարմար է հստակեցնել, որ սույն Հրահանգով սահմանված՝ պարտադիր տվյալների շարադրումը պետք է ներառված լինի ընկերության բոլոր նամակներում և պատվերի ձևաթղթերում՝ լինեն դրանք թղթային տարբերակով կամ այլ կրիչով: Տեխնոլոգիական զարգացումների առումով նպատակահարմար է նաև սահմանել, որ այդ տվյալները տեղադրվեն ընկերության որևէ կայքէջում,

9) երրորդ անձանց պաշտպանությունը պետք է ապահովվի այնպիսի դրույթներով, որոնք հնարավորինս սահմանափակում են ընկերության անունից ստանձնած պարտավորությունների անվավերության հիմքերը,

10) ընկերության և երրորդ անձանց, ինչպես նաև մասնակիցների միջև հարաբերությունների առումով իրավական հստակություն ապահովելու համար անհրաժեշտ է սահմանափակել գրանցման անվավերության դեպքերը և գրանցումն անվավեր ճանաչելու հետադարձ ուժն ու սահմանել կարճ ժամկետ, որի ընթացքում երրորդ անձինք կարող են անվավեր ճանաչելու դեմ առարկություն ներկայացնել,

11) սույն Հրահանգը չպետք է հակասի I հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգները ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ 1

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Հոդված 1

Սույն Հրահանգով սահմանված համաձայնեցման միջոցները կիրառվում են հետևյալ տեսակի ընկերություններին վերաբերող՝ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի նկատմամբ.

Բեյզիա՝

naamloze vennootschap, | société anonyme, |

commanditaire vennootschap op aandelen, | société en commandite par actions, |

personenvennootschap met beperkte aansprakelijkheid; | société de personnes à responsabilité limitée. |

Բուլդարիա՝

акционерно дружество, дружество с ограничена отговорност, командитно дружество с акции.

–Չեխիայի Հանրապետություն՝

společnost s ručením omezeným, akciová společnost.

Դանիա՝

aktieselskaber, kommanditaktieselskaber, anpartsselskaber.

Գերմանիա՝

die Aktiengesellschaft, die Kommanditgesellschaft auf Aktien, die Gesellschaft mit beschränkter Haftung.

Էստոնիա՝

aktsiaselts, osaühing.

Իռլանդիա՝

Companies incorporated with limited liability.

Հունաստան՝

ανώνυμη εταιρία, εταιρία περιορισμένης ευθύνης, ετερόρρυθμη κατά μετοχές εταιρία.

Իսպանիա՝

la sociedad anónima, la sociedad comanditaria por acciones, la sociedad de responsabilidad limitada.

Ֆրանսիա՝

société anonyme, société en commandite par actions, société à responsabilité limitée, société par actions simplifiée.

Իտալիա՝

la società per azioni, la società in accomandita per azioni, la società a responsabilità limitata.

Կիպրոս՝

δημόσιες εταιρείες περιορισμένης ευθύνης με μετοχές ή με εγγύηση, ιδιωτικές εταιρείες περιορισμένης ευθύνης με μετοχές ή με εγγύηση.

Լատվիա՝

akciju sabiedrība, sabiedrība ar ierobežotu atbildību, komanditsabiedrība.

Լիսվա՝

akciné bendrové, uždaroji akciné bendrovė.

Լյոնքստերբուրգ՝

la société anonyme, la société en commandite par actions, la société à responsabilité limitée.

Հոնգարիա՝

részvénytársaság, korlátolt felelősségű társaság.

Մալթա՝

kumpannija pubblika/public limited liability company, kumpannija privata./private limited liability company.

Նիդերլանդներ՝

naamloze vennootschap, besloten vennootschap met beperkte aansprakelijkheid.

Ավստրիա՝

die Aktiengesellschaft, die Gesellschaft mit beschränkter Haftung.

Լեհաստան՝

spółka z ograniczoną odpowiedzialnością, spółka komandytowo-akcyjna, spółka akcyjna.

Պորտուգալիա՝

a sociedade anónima de responsabilidade limitada, a sociedade em comandita por acções, a sociedade por quotas de responsabilidade limitada.

Ռումինիա՝

societate pe acțiuni, societate cu răspundere limitată, societate în comandită pe acțiuni.

Սլովենիա՝

delniška družba, družba z omejeno odgovornostjo, komaditna delniška družba.

Սլովակիա՝

akciová spoločnosť, spoločnosť s ručením obmedzeným.

Ֆինլանդիա՝

yksityinen osakeyhtiö/privat aktiebolag, julkinen osakeyhtiö/publikt aktiebolag.

Շվեդիա՝

aktiebolag.

Միացյալ Թագավորություն՝

Companies incorporated with limited liability:

ԳԼՈՒԽ 2

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Հոդված 2

Անդամ պետությունները ձեռնարկում են միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ 1-ին հոդվածում նշված ընկերությունների կողմից առնվազն հետևյալ փաստաթղթերի և տվյալների պարտադիր բացահայտումն ապահովելու համար՝

ա) հիմնադիր փաստաթուղթ, ինչպես նաև կանոնադրություն, եթե այն առանձին փաստաթղթով է,

բ) (ա) կետում նշված փաստաթղթերում կատարված ցանկացած փոփոխություն, այդ թվում՝ ընկերության գործունեության երկարաձգման մասին,

գ) հիմնադիր փաստաթղթի կամ կանոնադրության մեջ կատարված յուրաքանչյուր փոփոխությունից հետո՝ հիմնադիր փաստաթղթի կամ կանոնադրության ամբողջական տեքստը՝ ըստ տվյալ պահի փոփոխությունների,

դ) այն անձանց նշանակումը, պաշտոնանկությունը և տվյալները, որոնք, որպես օրենքի համաձայն ստեղծված մարմին կամ որպես այդպիսի մարմնի անդամ՝

i) լիազորված են ներկայացնելու ընկերությունը երրորդ անձանց հետ հարաբերություններում և դատական վարույթներում. բացահայտումից պետք է պարզ լինի, թե արդյո՞ք ընկերությունը ներկայացնելու լիազորություն ունեցող անձինք կարող են դա անել միանձնյա, թե՛ պետք է հանդես գան այլ անձանց հետ համատեղ.

ii) մասնակցում են ընկերության կառավարմանը, վերահսկողությանը կամ հսկողությանը.

ե) առնվազն տարին մեկ անգամ՝ տեղաբաշխված կապիտալի չափը, եթե հիմնադիր փաստաթղթում կամ կանոնադրությունում նշվում է կանոնադրական կապիտալի թույլատրված առավելագույն չափը, բացառությամբ, երբ տեղաբաշխված կապիտալի ցանկացած ավելացում պահանջում է փոփոխություններ կատարել կանոնադրության մեջ.

զ) յուրաքանչյուր ֆինանսական տարվա հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, որոնց հրապարակումը պահանջվում է Խորհրդի 78/660/ԵՏՀ [6], 83/349/ԵՏՀ [7], 86/635/ԵՏՀ [8] և 91/674/ԵՏՀ [9] հրահանգների համաձայն.

է) ընկերության գտնվելու վայրի ցանկացած փոփոխություն.

ը) ընկերության գործունեության դադարումը.

թ) դատարանների կողմից ընկերության գրանցումն անվավեր ճանաչելը.

ժ) լուծարողների նշանակումը, նրանց մասին տվյալները և նրանց համապատասխան լիազորությունները, բացառությամբ, երբ այդ լիազորություններն ուղղակիորեն և բացառապես օրենքից կամ ընկերության կանոնադրությունից են բխում.

ժա) լուծարման գործընթացի ավարտը, ինչպես նաև գրանցման գործողությունը դադարեցնելը, եթե դա անդամ պետություններում իրավական հետևանքներ է առաջացնում:

Հոդված 3

1. Յուրաքանչյուր անդամ պետությունում կենտրոնական գրանցամատյանում, առևտրային գրանցամատյանում կամ ընկերությունների գրանցամատյանում գրանցվող յուրաքանչյուր ընկերության համար գործ է բացվում:

2. Սույն հոդվածի նպատակներով՝ «Էլեկտրոնային եղանակով» նշանակում է, որ տեղեկությունն սկզբում ուղարկվում և իր նշանակակետում ստացվում է տվյալների մշակման (այդ թվում՝ թվային սեղմումը) և պահպանման էլեկտրոնային սարքերի միջոցով ու ամբողջությամբ փոխանցվում, հաղորդվում և ընդունվում է լարային, ռադիո, օպտիկական միջոցներով կամ այլ էլեկտրամագնիսական համակարգերով՝ անդամ պետությունների կողմից սահմանված կարգով:

3. Բոլոր փաստաթղթերը և տվյալները, որոնք պետք է բացահայտվեն 2-րդ հոդվածի համաձայն, պահվում են գործում կամ մուտքագրվում են գրանցամատյանում. գրանցամատյանում կատարված մուտքագրումների առարկան ցանկացած դեպքում պետք է արտացոլվի գործում:

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ընկերությունները, ինչպես նաև ծանուցելու կամ ծանուցելուն օժանդակելու պարտականություն ունեցող այլ անձինք և մարմինները հնարավորություն ունենան 2-րդ հոդվածի համաձայն բացահայտման ենթակա բոլոր փաստաթղթերը և տվյալները ներկայացնել էլեկտրոնային եղանակով: Բացի դրանից՝ անդամ պետությունները կարող են պահանջել բոլոր ընկերություններից կամ դրանց որոշակի կատեգորիաներից բոլոր նման փաստաթղթերը և տվյալները կամ դրանց որոշ տեսակները ներկայացնել էլեկտրոնային եղանակով:

2-րդ հոդվածում նշված բոլոր փաստաթղթերը և տվյալները, որոնք ներկայացվում են թղթային կամ էլեկտրոնային եղանակով, պահվում են գործում կամ մուտքագրվում գրանցամատյանում էլեկտրոնային տարբերակով: Այդ նպատակով, անդամ պետություններն ապահովում են, որ բոլոր այդպիսի փաստաթղթերը և տվյալները, որոնք ներկայացվում են թղթային եղանակով, ռեգիստրի կողմից փոխակերպվեն էլեկտրոնային տարբերակի:

Չի պահանջվում, որ մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը թղթային եղանակով ներկայացված՝ 2-րդ հոդվածում նշված փաստաթղթերը և տվյալները ռեգիստրի կողմից ինքնաբերաբար փոխակերպվեն էլեկտրոնային տարբերակի: Այդուհանդերձ, անդամ պետություններն ապահովում են, որ դրանք ռեգիստրի կողմից փոխակերպվեն էլեկտրոնային տարբերակի՝ 4-րդ պարբերությունը կիրարկելու համար ընդունված ակտերի համաձայն ներկայացված՝ էլեկտրոնային եղանակով բացահայտման համար դիմում ստանալու դեպքում:

4. 2-րդ հոդվածում նշված ամբողջական փաստաթղթերի կամ տվյալների կամ դրանց մի մասի պատճենը պետք է հնարավոր լինի ձեռք բերել դիմումի համաձայն: Դիմումները կարող են ներկայացվել ռեգիստրին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ ըստ դիմողի ընտրության:

Առաջին ենթապարբերությունում նշված պատճենները պետք է հնարավոր լինի ձեռք բերել ռեգիստրից թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ ըստ դիմողի ընտրության: Դա կիրառվում է ներկայացված բոլոր փաստաթղթերի և տվյալների դեպքում: Այդուհանդերձ, անդամ պետությունները կարող են որոշել, որ այն օրը կամ մինչև այն օրը, որը չի կարող 2006 թվականի դեկտեմբերի 31-ից ավելի ուշ լինել, թղթային եղանակով ներկայացված բոլոր փաստաթղթերը և տվյալները կամ դրանց որոշ տեսակներ հնարավոր չէ ձեռք բերել ռեգիստրից էլեկտրոնային եղանակով, եթե դրանք

ներկայացնելու և ռեգիստր ներկայացված դիմումի օրվա միջև որոշակի սահմանված ժամկետ է անցել: Այդ սահմանված ժամկետը չի կարող տասը տարուց պակաս լինել:

2-րդ հոդվածում նշված ամբողջական փաստաթղթերի կամ տվյալների կամ դրանց մի մասի պատճենը թղթային կամ էլեկտրոնային եղանակով ձեռք բերելու արժեքը չպետք է գերազանցի դրա համար կատարված վարչական ծախսերը:

Տրամադրվող թղթային պատճենները վավերացվում են որպես «ճիշտ պատճեններ», բացառությամբ, եթե դիմողը չի պահանջում նման վավերացում: Էլեկտրոնային պատճենները չեն վավերացվում որպես «ճիշտ պատճեններ», եթե դիմողն ուղղակիորեն չի պահանջում նման վավերացում:

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ էլեկտրոնային պատճենների վավերացումով երաշխավորվի դրանց աղբյուրի նույնականությունը և դրանց բովանդակության ամբողջականությունը առնվազն 1999/93/ԵՇ հրահանգի [10] 2(2) հոդվածի իմաստով ժամանակակից պահանջներին բավարարող էլեկտրոնային ստորագրության միջոցով:

5. 3-րդ պարբերությունում նշված փաստաթղթերի և տվյալների բացահայտումը կատարվում է պետության կողմից այդ նպատակով ստեղծված պաշտոնական տեղեկագրում ամբողջական տեքստի կամ դրա մի մասի հրապարակման միջոցով, կամ գործում ի պահ տրված կամ գրանցամատյանում մուտքագրված փաստաթղթին հղում կատարելով: Այդ նպատակով ստեղծված պաշտոնական տեղեկագիրը կարող է պահվել էլեկտրոնային տարբերակով:

Անդամ պետությունները կարող են որոշել պաշտոնական տեղեկագրում հրապարակումը փոխարինել հավասարապես արդյունավետ միջոցներով, ինչը պետք է ենթադրի առնվազն այնպիսի համակարգի օգտագործումը, որով բացահայտվող տեղեկությունները մատչելի են ժամանակագրական հերթականությամբ կենտրոնական էլեկտրոնային պլատֆորմի միջոցով:

6. Փաստաթղթերը և տվյալները ընկերության կողմից կարող են վկայակոչվել երրորդ անձանց հետ հարաբերություններում միայն 5-րդ պարբերության համաձայն բացահայտվելուց հետո, եթե ընկերությունը չի ապացուցում, որ երրորդ անձինք տեղեկացված են եղել դրանց մասին:

Սակայն բացահայտմանը հաջորդող՝ մինչև 16-րդ օրը կատարվող գործարքների առումով, փաստաթղթերը և տվյալները չեն վկայակոչվում երրորդ անձանց հետ հարաբերություններում, եթե նրանք ապացուցում են, որ անհնար էր, որ նրանք տեղեկացված լինեին դրանց մասին:

7. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ 5-րդ պարբերության համաձայն բացահայտվածի և գրանցամատյանում կամ գործում գոյություն ունեցողի միջև անհամապատասխանությունից խուսափելու համար:

Այնուամենայնիվ, անհամապատասխանության դեպքում, 5-րդ պարբերության համաձայն բացահայտված տեքստը չի կարող վկայակոչվել երրորդ անձանց հետ հարաբերություններում. այդ երրորդ անձինք, այնուամենայնիվ, կարող են վկայակոչել դրանք, եթե ընկերությունը չի ապացուցում, որ այդ անձինք տեղեկացված են եղել գործում ի պահ տրված կամ գրանցամատյանում մուտքագրված տեքստերի մասին:

Ավելին, երրորդ անձինք միշտ կարող են վկայակոչել ցանկացած փաստաթուղթ և տվյալ, որոնց կապակցությամբ բացահայտման ձևական պահանջների կատարումը դեռևս ավարտված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ չբացահայտվելը դրանց գրկում է ուժից:

Հոդված 4

1. Այն փաստաթղթերը և տվյալները, որոնք պետք է բացահայտվեն 2-րդ հոդվածի համաձայն, կազմվում և ներկայացվում են լեզուների մասին այն անդամ պետությունում կիրառելի կանոններով թույլատրվող լեզուներից որևէ մեկով, որտեղ բացվել է 3(1) հոդվածում նշված գործը:

2. 3-րդ հոդվածում նշված պարտադիր բացահայտումից բացի՝ անդամ պետությունները թույլ են տալիս 2-րդ հոդվածում նշված փաստաթղթերի և տվյալների՝ 3-րդ հոդվածի համաձայն կամավոր բացահայտումը Համայնքի ցանկացած պաշտոնական լեզվով (լեզուներով):

Անդամ պետությունները կարող են սահմանել այդպիսի փաստաթղթերի և տվյալների թարգմանության վավերացում:

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ կամավոր բացահայտված թարգմանությունների մատչելիությունը երրորդ անձանց համար հեշտացնելու համար:

3. 3-րդ հոդվածում նշված պարտադիր բացահայտումից և սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն նախատեսված կամավոր բացահայտումից բացի՝ անդամ պետությունները կարող են թույլ տալ 3-րդ հոդվածի համաձայն տվյալ փաստաթղթերի և տվյալների բացահայտումը ցանկացած այլ լեզվով (լեզուներով):

Անդամ պետությունները կարող են սահմանել այդպիսի փաստաթղթերի և տվյալների թարգմանության վավերացում:

4. Ռեզիստրի պաշտոնական լեզուներով բացահայտված փաստաթղթերի և տվյալների ու կամավոր բացահայտված թարգմանության միջև անհամապատասխանության դեպքում վերջինս չի կարող վկայակոչվել երրորդ անձանց հետ հարաբերություններում: Այդուհանդերձ, երրորդ անձինք կարող են վկայակոչել կամավոր բացահայտված թարգմանությունները, եթե ընկերությունը չի ապացուցում, որ երրորդ անձինք տեղեկացված են եղել պարտադիր բացահայտման ենթակա տարբերակի մասին:

Հոդված 5

Անդամ պետությունները սահմանում են, որ թե՛ թղթային, թե՛ այլ կրիչով նամակներում և պատվերի ձևաթղթերում նշվեն հետևյալ տվյալները.

ա) անհրաժեշտ տեղեկություններ՝ պարզելու համար այն գրանցամատյանը, որտեղ պահվում է 3-րդ հոդվածում նշված գործը, ինչպես նաև այդ գրանցամատյանում ընկերության համարը.

բ) ընկերության իրավական ձևը, գտնվելու վայրը և, անհրաժեշտության դեպքում, ընկերության գործունեությունը դադարեցնելու փաստը:

Երբ այդ փաստաթղթերում հղում է կատարվում ընկերության կապիտալին, այդ հղումը պետք է վերաբերի բաժնետիրական կապիտալին և վճարված կապիտալին:

Անդամ պետությունները սահմանում են, որ ընկերությունների կայքէջերում պետք է ընդգրկված լինեն առնվազն առաջին պարբերությունում նշված տվյալները և, հարկ եղած դեպքում, հղում՝ բաժնետիրական կապիտալին և վճարված կապիտալին:

Հոդված 6

Յուրաքանչյուր անդամ պետություն ինքն է որոշում այն անձանց, ովքեր պետք է կատարեն բացահայտման հետ կապված ձևական պահանջները:

Հոդված 7

Անդամ պետությունները համապատասխան պատժամիջոցներ են նախատեսում առնվազն հետևյալ դեպքերում՝

ա) 2(գ) հոդվածով պահանջվող հաշվապահական հաշվառման փաստաթղթերը չբացահայտելը.

բ) առևտրային փաստաթղթերում կամ ընկերության ցանկացած կայքէջում 5-րդ հոդվածով նախատեսված պարտադիր տվյալները չնշելը:

ԳԼՈՒԽ 3

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆԶՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 8

Եթե մինչև ստեղծվող ընկերության կողմից իրավասուբյեկտություն ձեռք բերելը նրա անունից գործողություն է կատարվել, և ընկերությունը չի ընդունում այդ գործողությունից բխող պարտավորությունները, ապա այն անձինք, ովքեր իրականացրել են այդ գործողությունը, անսահմանափակ համապարտ պատասխանատվություն են կրում դրա համար, եթե այլ համաձայնություն առկա չէ:

Հոդված 9

Այն անձանց մասին տվյալների բացահայտման ձևական պահանջների կատարման ավարտը, որոնք, որպես ընկերության մարմին, իրավասու են ներկայացնելու ընկերությունը, թույլ չի տալիս երրորդ անձանց հետ հարաբերություններում վկայակոչել նրանց նշանակման հետ կապված որևէ շեղում, եթե ընկերությունը չի ապացուցում, որ նման երրորդ անձինք տեղեկացված են եղել դրա մասին:

Հոդված 10

1. Ընկերության մարմինների՝ նույնիսկ դրա նպատակներից դուրս կատարած գործողությունները պարտադիր են ընկերության համար, եթե այդ գործողություններն այն լիազորությունների սահմանազանցում չեն, որ օրենքը վերապահում կամ թույլատրում է վերապահել այդ մարմիններին:

Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են նախատեսել, որ ընկերության նպատակներից դուրս կատարված նման գործողությունները պարտադիր չեն ընկերության համար, եթե այն ապացուցում է, որ երրորդ անձինք տեղյակ են եղել գործողությունների՝ ընկերության նպատակներից դուրս լինելու մասին կամ,

հանգամանքների բերումով, չէին կարող տեղյակ չլինել դրա մասին. այս դեպքում կանոնադրության բացահայտումն ինքնին բավարար ապացույց չէ:

2. Ընկերության մարմինների լիազորությունների սահմանափակումները, որոնք բխում են կանոնադրությունից կամ իրավասու մարմնի որոշումից, չեն կարող վկայակոչվել երրորդ անձանց հետ հարաբերություններում, նույնիսկ երբ դրանք բացահայտվել են:

3. Եթե ազգային իրավունքով նախատեսվում է, որ ընկերությունը ներկայացնելու իրավասությունը կարող է, որպես շեղում խնդրո առարկան կարգավորող իրավական նորմերից, կանոնադրությամբ վերապահվել մեկ կամ համատեղ գործող մի քանի անձանց, ապա այդ ազգային իրավունքով կարող է նախատեսվել, որ կանոնադրության նման դրույթը կարող է վկայակոչվել երրորդ անձանց հետ հարաբերություններում՝ պայմանով, որ այն վերաբերում է ներկայացուցչության ընդհանուր իրավասությանը. երրորդ անձանց հետ հարաբերություններում կանոնադրության նման դրույթը վկայակոչելու հարցը կարգավորվում է 3-րդ հոդվածով:

ԳԼՈՒԽ 4

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 11

Այն բոլոր անդամ պետություններում, որոնց իրավական համակարգերով չի նախատեսվում ընկերության ստեղծման ժամանակ կանխարգելիչ, վարչական կամ դատական վերահսկողություն, հիմնադիր փաստաթուղթը, ընկերության կանոնադրությունը և այդ փաստաթղթերում կատարված ցանկացած փոփոխություն կազմվում և վավերացվում են պատշաճ իրավական ձևով:

Հոդված 12

Անդամ պետությունների իրավական համակարգերով չի կարող այլ կերպ նախատեսվել ընկերությունների գրանցման անվավերություն, քան հետևյալ դրույթների համաձայն.

ա) գրանցումը պետք է անվավեր ճանաչվի դատարանի որոշմամբ.

բ) գրանցումը կարող է անվավեր ճանաչվել միայն հետևյալ հիմքերով՝

i) չի կազմվել հիմնադիր փաստաթուղթ կամ չեն պահպանվել կանխարգելիչ վերահսկողության կանոնները կամ համապատասխան ձևական իրավական պահանջները.

ii) ընկերության նպատակները հակասում են օրենքին կամ հանրային կարգին.

iii) հիմնադիր փաստաթղթով կամ կանոնադրությամբ չեն սահմանվում ընկերության անվանումը, կապիտալի անհատական բաժանորդագրումների չափը, տեղաբաշխված կապիտալի ընդհանուր չափը կամ ընկերության նպատակները.

iv) չեն պահպանվել վճարման ենթակա կապիտալի նվազագույն չափի մասին ազգային իրավունքի դրույթները.

v) բոլոր հիմնադիրներն անգործունակ են.

vi) հակասելով ընկերությունների նկատմամբ կիրառվող ազգային իրավունքին՝ հիմնադիրների թիվը երկուսից պակաս է:

Ընկերության գոյությունը ենթակա չէ դադարման, գրանցումը՝ առոչնչության, վիճարկելիության, անվավեր ճանաչման՝ գրանցման անվավերության վերը նշված հիմքերից բացի որևէ այլ հիմքով:

Հոդված 13

1. Երրորդ անձանց հետ հարաբերություններում գրանցման անվավերության մասին դատարանի որոշումը վկայակոչելու հարցը կարգավորվում է 3-րդ հոդվածով: Եթե ազգային իրավունքը որևէ երրորդ անձի իրավունք է վերապահում վիճարկելու այդ որոշումը, վերջինս կարող է դա անել միայն դատարանի որոշման հրապարակային ծանուցումից հետո վեց ամսվա ընթացքում:
2. Ինչպես ընկերության լուծարումը, այնպես էլ գրանցման անվավերությունը հանգեցնում են ընկերության գործունեության դադարման:
3. Գրանցման անվավերությունը, որպես այդպիսին, չի ազդում ընկերության կողմից կամ ընկերության հետ ստանձնած պարտավորությունների վավերության վրա՝ չսահմանափակելով ընկերության գործունեության դադարման հետևանքները:
4. Յուրաքանչյուր անդամ պետության իրավունքում կարող են դրույթներ նախատեսվել ընկերության մասնակիցների համար գրանցման անվավերության հետևանքների վերաբերյալ:
5. Կապիտալում բաժնեմաս ունեցող անձինք պարտավոր են վճարել դեռևս չվճարված այն կապիտալը, որին բաժանորդագրվելու մասին համաձայնություն է ձեռք բերվել, քանի դեռ դա անհրաժեշտ է՝ պարտատերերի հանդեպ ստանձնած պարտավորությունները կատարելու համար:

ԳԼՈՒԽ 5

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 14

Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական ակտերի տեքստը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 15

Ոչ ուշ, քան մինչև 2012 թվականի հունվարի 1-ը, Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ գեկույց է ներկայացնում, անհրաժեշտության դեպքում նաև առաջարկ՝ 2(գ) և 3-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ հոդվածների դրույթները փոփոխելու մասին՝ հաշվի առնելով այդ դրույթների կիրառման ընթացքում ձեռք բերված փորձը, դրանց նպատակները և այդ ժամանակ գրանցված տեխնոլոգիական զարգացումները:

Հոդված 16

I հավելվածի Ա մասում թվարկված ակտերով փոփոխված 68/151/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ չհակասելով I հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգները ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած հրահանգին արված հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Հրահանգին արված հղումներ և պետք է ընթերցվեն ըստ II հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակի:

Հոդված 17

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 18

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2009 թվականի սեպտեմբերի 16-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Յ. Բուզեկ

Խորհրդի կողմից՝

Նախագահ Յ. Մալմստրյոմ

[1] ՊՏ 2, 15.01.1962թ., էջ 36/62:

[2] ՊՏ C 204, 09.08.2008թ., էջ 25:

[3] Եվրոպական պառլամենտի 2008թ. հունիսի 17-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռևս չի հրապարակվել) և Խորհրդի 2009թ. հուլիսի 13-ի որոշում:

[4] ՊՏ L 65, 14.03.1968թ., էջ 8:

[5] Տե՛ս Հավելված I, Մաս Ա:

[6] Պայմանագրի 54(3)(է) հոդվածի վրա հիմնված՝ «Որոշակի տեսակի ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1978 թվականի հուլիսի 25-ի 78/660/ԵՏՀ չորրորդ հրահանգ (ՊՏ L 222, 14.08.1978թ., էջ 11):

[7] Պայմանագրի 54(3)(է) հոդվածի վրա հիմնված՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1983 թվականի հունիսի 13-ի 83/349/ԵՏՀ յոթերորդ հրահանգ (ՊՏ L 193, 18.07.1983թ., էջ 1):

[8] «Բանկերի և ֆինանսական այլ կազմակերպությունների տարեկան ֆինանսական ու համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1986 թվականի դեկտեմբերի 8-ի 86/635/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 372, 31.12.1986թ., էջ 1)

[9] «Ապահովագրական կազմակերպությունների տարեկան ֆինանսական և համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 19-ի 91/674/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 374, 31.12.1991թ., էջ 7):

[10] «Էլեկտրոնային ստորագրությունների վերաբերյալ Համայնքի իրավական համակարգի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1999 թվականի դեկտեմբերի 13-ի 1999/93/ԵՀ հրահանգ (ՊՏ L 13, 19.01.2000թ., էջ 12):

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՄԱՍ Ա

Ուժը կորցրած ճանաչված հրահանգն իր հետագա փոփոխությունների ցանկով

(16-րդ հոդվածում նշված)

Խորհրդի 68/151/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 65, 14.03.1968թ., էջ 8) ||

1972 թվականի Անդամակցության մասին ակտի III.Թ կետ (ՊՏ L 73, 27.03.1972թ., էջ 89) ||

1979 թվականի Անդամակցության մասին ակտի III.Գ կետ (ՊՏ L 291, 19.11.1979թ., էջ 89) |

1985 թվականի Անդամակցության մասին ակտի II.Դ կետ (ՊՏ L 302, 15.11.1985թ., էջ 157) |
| 1994 թվականի Անդամակցության մասին ակտի XI.Ա կետ (ՊՏ C 241, 29.08.1994թ., էջ 194) ||

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003/58/ԵՀ հրահանգ (ՊՏ L 221, 04.09.2003թ., էջ 13) ||

2003 թվականի Անդամակցության մասին ակտի 1.4.Ա կետ (ՊՏ L 236, 23.09.2003թ., էջ 338) ||

Խորհրդի 2006/99/ԵՀ հրահանգ (ՊՏ L 363, 20.12.2006թ., էջ 137) || Միայն հավելվածի Ա.1 կետը

ՄԱՍ Բ

Ազգային իրավունքում փոխատեղման ժամկետների ցանկը

(16-րդ հոդվածում նշված)

Հրահանգ | Փոխատեղման ժամկետը |

68/151/ԵՏՀ | 1969 թվականի սեպտեմբերի 11 |

2003/58/ԵՀ | 2006 թվականի դեկտեմբերի 30 |

2006/99/ԵՀ | 2007 թվականի հունվարի 1 |

ՀԱՎԵԼՎԱԾ II
ՀԱՄԵՄՍԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ

68/151/ԵՏՀ հրահանգ | Սույն Հրահանգը|

1-ին հոդված | 1-ին հոդված |

2-րդ հոդված | 2-րդ հոդված |

3(1) հոդված | 3(1) հոդված |

3(2) հոդված | 3(3) հոդված |

3 (3) հոդված | 3(4) հոդված |

3 (4) հոդված | 3(5) հոդված |

3 (5) հոդված | 3(6) հոդված |

3(6) հոդված, առաջին և երկրորդ ենթապարբերություններ | 3(7) հոդված, առաջին և երկրորդ ենթապարբերություններ |

3(7) հոդված | 3(7) հոդված, երրորդ ենթապարբերություն |

3(8) հոդված | 3(2) հոդված |

3ա հոդված | 4-րդ հոդված |

4-րդ հոդված | 5-րդ հոդված |

5-րդ հոդված | 6-րդ հոդված |

6-րդ հոդված | 7-րդ հոդված |

7-րդ հոդված | 8-րդ հոդված |

8-րդ հոդված | 9-րդ հոդված |

9-րդ հոդված | 10-րդ հոդված |

10-րդ հոդված | 11-րդ հոդված |

11- րդ հոդված, ներածական մաս | 12-րդ հոդված, ներածական մաս |

11-րդ հոդված, 1-ին կետ | 12-րդ հոդված, (ա) կետ|

11-րդ հոդված, 2-րդ կետ, ներածական մաս | 12-րդ հոդված, (բ) կետ, ներածական մաս |

11-րդ հոդված, 2- րդ կետ, (ա)-(գ) կետեր | 12-րդ հոդված, (բ) կետ, (i)-(vi) կետեր|

12-րդ հոդված | 13-րդ հոդված |

13-րդ հոդված, առաջին, երկրորդ և երրորդ պարբերություններ| — |

13-րդ հոդված, չորրորդ պարբերություն| 14-րդ հոդված |

14-րդ հոդված | 18-րդ հոդված |

— | 15-րդ հոդված |

— | 16-րդ հոդված |

— | 17-րդ հոդված |

— | Հավելված I |

— | Հավելված II |